

ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի Խաղարկային դատարանը ստացել է միջնորդություն, նույն կրթահամալիրի հեղինակային կրթական ծրագրերի կենտրոնի ղեկավար՝ Սուսան Մարկոսյանին, գործով համապատասխանող ճանաչելու վերաբերյալ: Սուսան Մարկոսյանը կից ներկայացրել է նույն կրթահամալիրի տնօրեն Աշոտ Բլեյանի լիազորագիրը:

Դատարանը որոշեց

Առաջնորդվելով ՀՀ Քաղաքացիական Դատավարության օրենսգրքի 27, 29, 30 հոդվածներով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ միջնորդությունը ներկայացվել է դատարանի դահլիճում և հայցվոր Տիգրան Աբրահամյանը չի ներկայացրել առարկություն, միջնորդությունը բավարարել: Սուսան Մարկոսյանին գործով ճանաչել որպես համապատասխանող: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀՀ ք. Երևան, Բաբաջանյան 25

ՀՀ ԿԳՆ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր ՊՈԱԿ-ի Խաղարկային դատարանի դատավոր՝ Վահրամ Թոքմաջյան

Օգնական՝ Սանասար Գևորգյան

18.12.2014թ.